սութիւնները դեռ յայտնի չէին մեր գիտական աշխարհում, ես...

— ...Սօրբոնը աւարտելուց յետոյ իմ ուշադրութիւնս դրաւեց հայ ժողովրդական վէպը: Այստեղ, թոյլ եմ տալիս ինձ մտնել շատ բնորոշ եւ ըստ ինձ վերին աստիճանի կարեւոր մի մանրամասնութեան մէջ: Դուք գիտէք, որ...

— ...Այդ ուսումնասիրութիւնս աւարտելուց յետոյ, ես եկայ այն եզրակացութեան, որ բառերի արմատները ուսումնասիրելու ժամանակ գիտնականները աչքի չէին առած կարեւորագոյն մի հանգամանք... Վերցնենք մի օրինակ բնութիւնից: Ցայտնի է որ Սիամի ինչ ինչ բոյսերը...

Նախագահի մօրուքը ծանրացել է: Կարծես մէկը բռնել քաշում է: Վերը դրուած փոքրիկ չոգիի մեքենան մտել էր գլխի մէջ եւ թփ, թփ, թփ ձայնում էր: Մշուշի նման մի բան: Քանի քանի անդամներ ուժ արաւ ուղեղը տեղը բերել, գոնէ ձեւի համար մի հարց տալ, բայց չյաջողեց: Մեծ յոյսեր ունէր նախկին Դաշնակցական նախարարի վրայ, բայց նա էլ «հայ իրաւունքի» միակ մասնագէտն էր եւ առայժմ նպատակայարմար չէր նրա անցեալը վերյիշել:

Օրիորդները գրչի կոթը դրել էին շրթունքի վրայ, իբրեւ մեծ ուշադրութեան եւ նաեւ մտածողութեան նշան: Սակայն, կամաց կամաց կոթերը բերանը մտան եւ ակռաների մէջ խաղացին: Մի ժամ յետոյ կատաղի կրծում էին նոյն այդ կոթերը, երբ այբուբենի շարքով նախագահը հրաւիրեց ոտքի կանգնել Պետական Համալսարանի դոնապանը եւ իր կինը: Խեղճ գաղթականներ: Հինգ ամիս է ծառայում են, խղճամիտ... Խղճամի՞տ: Նախագահը արթնցաւ, ձայնը բարձրացրեց, յարձակուեց:

— Ասում են մարդակազմութեան սրահի դիակները տալու ժամանակ նրանց շորերը գողացել էք: Բակը անմաքուր է, կտրած ոտքեր են տեսնուել, վարիչի կառքի ձիին ոտքը ձեր պատճառով կոտրուել է...

— Գողացե՞լ եմ... գողացե՞լ եմ... Դիակները ի՞նչ շորեր ունեն որ... մեծ մասամբ պատռուած ցնցոտիներով մուրացկաններ են. կամ խուժան... Այո՛, խօսք եղաւ երկար մօրուքով ծերունի դիակի մասին, բայց մենք չենք, այլ ուսանողները... տաբատը տարել էին, որովհետեւ դեռ պատռած չէր, ասին՝ տանենք հագնենք... Իսկ որ բակում ոտքեր են տեսել՝ նա էլ ուսանողներն են, գրպանն են դնում, տանում տուն, եփում ու ոսկորը սերտում...

— Դիակը լուալու համար սապոն չեն տալիս... թէ որ ձին ոտքը դարկել է քարին, ես ի՞նչ մեղաւոր եմ... Տեղկոմին հարիւր անգամ ասացինք...

Շիշէ պնակների մէջ օճերը սկսում են շարժուել: Թիթեռնիկները որդ են դառնում, իսկ —

Այնտեղ Երաժշտանոցում

Տիկինը սեղմում է իր լարուած ջղերի ճաղ-բանդը, թոքերը լեղուի տակ թափ տալիս, գոյնը մոմակալի մէջը դնում, մատերը գալարում ու հայերէն հարցերին ռուսերէն լեղուով պատասխանում.

— Բարձրագոյն երաժշտական մշակոյթ... մեծ պրոֆեսորների հիացում, Հայաստանի միակ սոպրանո... ե՞ս, ինտրիգնե՞ր, երբե՛ք... դրսից եկող երգչուհիներին մենք երբեք դաշնամուր չենք մերժած... Ինչպէ՞ս, ե՞բբ... Մենք աշակերտներ չենք ղրկած որպէսզի սուլեն... չենք ստիպած մեզ ծափահարել... Դրանք զզզրպարտութիւններ են... Երաժշտանոցի հաշուին ինձ համար ծաղկեփունջ... Երբ Պետերբուրգ էի, իմ պրոֆեսորներս հիանում էին, հիանում էին, հիա...

Տիկնոջ գոյնը սեւանում է, աչքերը փակւում են, բարձր ծիծաղում է: Ջո՛ւր, ջո՛ւր... «Ես, ես»... վայր է ընկնում ջուրթակահարի թեւերի մէջ... ջուր, ջո՛ւր...

* * *

Կէս գիշեր է:

Տները խաւարին դէմ են տուել իրենց պատուհանները ու բոլորուել են անհանգիստ երազների շուրջ:

Փողոցում ոչ ոք չկայ:

Կ. Կէնի շէնքից, ուրուականի նման, դուրս է սողում մի էակ: Երկու ոտքերի վրայ քայլող մի տեսակ գորտ: Կարճահասակ: Բարձր ուսերի աջցանի տակ սեղմուած վիզ: Մեծ, տնկրուած գլուխ՝ տափակ, հեծանիւի գլխարկի

Հայ մատենագրութեան թուանշանային գրադարան